№ 89 Մայիսի 19 (31) 1881 Մայիսի 19 (31) № 89

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ. կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція ‹Мшакъ›

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հրէաների ջարդի տնտեսական հետեւանք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. ‹Մասիս› լրագրից. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիա. Թիւրքիա.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մատենագրութիւն.

ՀՐԷԱՆԵՐԻ ՋԱՐԴԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔ

—

Բարբարոս շարժումը, որ տեղի ունի այս րոպէիս ամբողջ հարաւային Ռուսաստանում ինչ պատճառներից առաջ եկաւ,—մեր նպատակը չէ այստեղ քննելու. Պատճառները շատ բազմազան են. ռուս ժողովրդի ֆանատիկոսութիւնը մովսիսական կրօնի հետեւողների դէմ, հրէաների վերաբերութեամբ բացառական օրէնքները, որոնց զօրութեամբ հրէան իրաւունք չունի ապրել ամբողջ Ռուսաստանում, այլ պետութեան մի քանի նահանգներում միայն, այդ պատճառով նրանց մի տեղ անչափ խմբվելը, նրանց իրաւունք չունենալը հողեր գնելու, նրանց ձեռքով ռուս ժողովրդի հարստահարելը, նրանց միմիայն առեւտուրով և արդիւնագործութեամբ պարապելը, մամուլի մի մասի ռուս ժողովրդի մոլեռանդութեան հրէաների դէմ անդադար գրգռելը, նոյն իսկ հրէաների սահմանափակ ընտանեկան և հասարակական կեանքը, որի պատճառով նրանք դարերով չէին խառնվում ռուս ժողովրդի հետ, նրանց իրաւունք չունենալը գործ դնել իրանց մտաւոր ոյժերը հասարակական և պետական այս կամ այն ասպարիզում,—ահա այդ բոլոր պատճառները միասին վեր առած ծնեցնում են և վառ են պահում միշտ բուն ռուս ժողովրդի և հրէաների մէջ յարաբերութիւնների սաստիկ խորթութիւն և միջոց չեն տալիս համերաշխութեան կապ հաստատել մի և նոյն պետութեան համաքաղաքացիների մէջ։

Ի՞նչ է եղել վերջին ահռալի անցքերի շարժառիթը, արդեօք յեղափոխականների ստորերկրեայ պրօպագանդան, որոնց նպատակն է որքան հնար է աւելի խառնակութիւն գցել Ռուսաստանում, թէ մասամբ ժողովրդի ագիտութիւնը, որ մի բառ միւսի տեղ ընդունելով, հաւատացած էր որ ինքն տէրութիւնը հրամայել է ջարդել հրէաներին, թէ մասամբ և գերմանիայի հակահրէական ամօթալի շարժման օրինակը,—մենք այստեղ քննել չենք կարող, քանի որ վերջին օրերի տխուր անցքերը կատարելապէս բացատրված չեն։

Բայց անհերքելի է, որ հարաւային Ռուսաստանի մէջ պատահած հրէաների սարսափելի ջարդը ոչ թէ միայն կաղքատացնի նոյն իսկ հրէաներին, բայց հարուած կը տայ և հարաւային Ռուսաստանի ամբողջ առեւտուրին, հարուած կը տայ և ռուս առեւտուրին և արդիւնագործութեանը առհասարակ, արձագանք կունենայ և պետութեան ներքին տնտեսական կեանքի մէջ, վատ ներգործութիւն կունենայ և Ռուսաստանի արտաքին, միջազգային տնտեսական յարաբերութիւնների վրա։

Հարաւային Ռուսաստանում առեւտուրը, արդիւնագործութիւնը, ֆաբրիկաները, վաճառականութիւնը, բանկերը, բաժանորդական այլ և այլ ընկերութիւնները՝ հրէայ ազգաբնակութեան ձեռքումն են։ Պետութեան մի մասի տնտեսական գիրքը կապ ունի նոյն պետութեան միւս մասերի տնտեսական դրութեան հետ։

Արդէն առեւտուրը ընկած է հարաւային նահանգներում, առաջին հարկաւորութեան մթերքների գները սաստիկ բարձրացել են, գլխաւոր ֆաբրիկաները փակված են, մեծ քաղաքների մի քանի բանկերը սնանկանալու մօտ են, արտասահմանից դադարել են ապրանքներ բերելուց, ունեւոր հրէաները, որոնց գործարաններում հազարաւոր մշակներ էին բանում, գցում են իրանց գործերը և տեղափոխվում են արտասահման, հարաւային Ռուսաստանի մի քանի տեղերում ամեն տարի տեղի ունեցող տօնավաճառները չը կայացան այս տարի, հասարակութիւնը հանում է իր կապիտալները մասնաւոր և հասարակական բանկերից և տանում, դնում է պետական բանկի բաժինները, կիեվի մի բանկ օժանդակութիւն է խնդրում կառավարութենից, արդէն լրագիրներում լուր է տարածվել որ այս տարի Նիժնի-Նովգորոդի տօնավաճառը կայանալու չէ, և այլն։

Այդ տեսակ տնտեսական ճգնաժամ չէ կարող ներգործութիւն չունենալ և Ռուսաստանի միջազգային տնտեսական յարաբերութիւնների վրա, ռուսաց արժեթղթերի արտասահմանում սաստիկ ընկնելու վրա։ իսկ երբ արժեթղթերը ընկնում են, դրա հետ միասին և ոսկին հրէշաւոր կերպով բարձրանում է։ Ահա արդէն հեռագիրը մեզ հաղորդում է որ ռուսաց արժեթղթերը, որոնք մի քանի շաբաթ առաջ յանկարծ բարձրացել էին եւրոպական բորսաների վրա, այժմ սաստիկ ընկել են։ Ոսկին բարձրացել է մինչև 8 րուբլ 9 կոպէկ, իսկ ռուսաց 100 րուբլ որ ինչպէս հաւասար է 300 գերմանական մարկի և որ մի քանի շաբաթ առաջ արժէր Համբուրգի մէջ 218 մարկ, այժմ ընկել է 207 մարկի, փարիզում, ուր մայիսի սկզբում ռուսաց 100 րուբլ արժէր դեռ 261 ֆրանկ, այժմ ընկել է 256 ֆրանկի, և այլն։

Եւրոպական բորսաները առհասարակ շատ զգայուն են միշտ դէպի եւրոպական մի պետութեան մէջ կատարվող տնտեսական կամ քաղաքական անցքերը։

Այդ տեսակ անցքեր, ուրեմն, ինչպէս ազգաբնակութեան մի մասի ջարդը միւս մասի ձեռքով, ժամանակակից պետութիւնների միջազգային յարաբերութիւնների մէջ համարվում են կորստաբեր տնտեսական ճգնաժամեր և էժան չեն նստում նոյն իսկ ազգաբնակութեան ջարդող մասի համար։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ՄԱՍԻՍ" ԼՐԱԳՐԻՑ

—

Ռուսաստանէն հասած վերջին լուրերէն կիմացուի թէ Ս. Էջմիածնի վեհ. կաթո-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

‹ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍ ՁԱՅՆ› Ս. Շահազիզեանի, Մօսկվա, 1881 թ. գինը 2 ր.

—

Այս օրերս հրատարակվեցաւ Մօսկվայում վերև յիշված վերնագրով հայերէն մի գիրք, 351 երեսից բաղկացած, որ մեր կարծիքով, մի գեղեցիկ բացառութիւն է կազմում մեր ժամանակակից գրականութեան մէջ.

Շահազիզեանի գիրքը կարդացվում է մեծ ուրախութեամբ, մինչև անգամ կասեմ յափշտակութեամբ. Նա մեր արդեան հայ գրականութեան մէջ այն կողմից բացառութիւն է կազմում, որ մեր գրականական պատմութեան մօտիկ անցեալի անաչառ քննադատութիւն է. Նա այն կողմից էլ բացառութիւն է կազմում, որ շատ հազիւ է պատահում որ մի հայ հրապարակապէս հանդէս դուրս գայ մի ուրիշ հային պաշտպանելու. Հային յատուկ է ցեխ գցել հայի երեսին, ինչքան բարձր էլ լինէր նա, ոտնակոխ անել նրա պատիւը,— բայց ոչ թէ պաշտպանել մի այլ հային....

Շահազիզեանի գիրքը արտայայտութիւն է զարթնած հասարակական խղճմտանքի, դա մի բողոք է, խղճմտանքի մի աղաղակ է ընդդէմ զրպարտութեան ու բամբասանքի, սև նախանձի, քսութեան, կեղծաւորութեան և խաւարասիրութեան.

Խօսքը պ. Ալէքսանդր Երիցեանի յօդուածի վրա է, որ նա հրատարակեց ‹փորձի› մէջ 1879 թւին Ստեփաննոս Նազարեանցի մասին.

Բամբասանք և զրպարտութիւն ենք ասում,—որովհետև Շահազիզեանը չօշափելի փաստերով ցոյց է տալիս, որ Երիցեանը յեղաշրջում է և աղաւաղում է խօսքեր և իրողութիւններ Նազարեանցի կենսագրութիւնը գրելու ժամանակ. Սև նախանձ,—որովհետև ‹փորձի› աշխատակիցը ամեն ճիգ է թափում ցոյց տալու համար որ Նազարեանցը ոչինչ նշանաւոր բան չարդիւնաբերեց իր ամբողջ գործունէութեան ժամանակ. Քսութիւն,—որովհետև ազնիւ պարոնը, ինչպէս Շահազիզեանը նրան անդադար անուանում է իր գրքի մէջ, ջանում է իր յօդուածով հաճելի լինել այն պարոնների մի յայտնի խմբին, որոնք միշտ եղել են Նազարեանցի ոխերիմ թշնամիներ և աշխատել են նրան մաշել, նրան վնասել. Կեղծաւորութիւն և խաւարասիրութիւն,—որովհետև Երիցեան կամենում է իր գրուածքի մէջ երևալ առաջադէմ, նոր, ազատամիտ ուղղութեան տէր մարդ, յանդիմանում է մինչև անգամ Նազարեանցին որ սա չէր հետևում իր ժամանակակից ռուս առաջադէմ մամուլի ոգուն և մի և նոյն ժամանակ պախարակում է Նազարեանցին նոյն իսկ նրա բոլոր առաջադէմ գաղափարների համար, համարելով նրանց ազգի համար ամենավնասակար գաղափարներ.

Ահա ինչ տպաւորութեան տակ է լինում և ինչ եզրակացութիւնների ու համոզմունքների է գալիս ընթերցողը. Շահազիզեանի գիրքը ամբողջապէս կարդալուց յետոյ։ Դա ճշմարիտ է մի պօլեմիկական խիստ, անողորմ գրուածք է, բայց ոչ թէ մեր հայոց միւս պօլեմիկական գրուածների նման, որոնց մէջ տիրում են դատարկ խօսքեր, կիրք, ապացոյցներից զուրկ մըտքեր,—բայց մի ծանր, յարգելի աշխատանք, որ գրելու համար, երևում է, հարկաւորվեցաւ շատ ժամանակ և գործի խղճմտաւոր ուսումնասիրութիւն, որ հիմնված է ամբողջապէս իրողութիւնների ճոխ հաւաքածուի, լոգիկական դատողութեան, վկայութիւնների և խիստ համեմատական սիստեմայի վրա.

Բայց սորանից գրքի հեղինակի մէջ մենք բարեւում ենք ազատամիտ, առաջադէմ կուսակցութեան մարդուն, այն փոքրաթիւ հայ ընտանիքի անդամակցուն, որին և մենք մեզ միշտ պատիւ ենք համարել պատկանելու.

Առաջադէմ ոգին Ռուսաստանի հայոց գրականութեան մէջ մտցրած է եղել Ս. Նազարեանցի ձեռքով և նրանք որոնք այժմ պատկանում են այդ ուղղութեանը, հպարտութեամբ կարող են իրանց անուանել Նազարեանցի աշակերտներ.

Յիսուներորդ թուականների սկզբներում, երբ հայերի մէջ դեռ չը կար ազգային զգացմունքի ինքնաճանաչութիւն, երբ հայը դեռ չէր խօսում ու գրում իր գրական, աշխարհաբառ մայրենի լեզուով, երբ մեր հասարակութեան մէջ դեռ զարթնած չէր ինքնաքննութեան զգացմունքի նշոյլն անգամ,—յանկարծ հանդէս դուրս եկաւ մի մարդ որ սկսեց քարոզել աշխարհաբառ կենդանի լեզուի գործածութիւնը և առաջին փորձ փորձեց ստեղծել այդ կենդանի գրական լեզուն, առաջինն էր, որ մտցրեց մամուլի մէջ ինքնաքննութեան սիստեմը, առաջինն էր, որ փորձեց բացատրել ազգութեան գաղափարը, յայտնելով որ ազգութիւնը և կրօնը ջոկ բաներ են.

Ինչպէս միշտ պատահում է վերանորոգիչների հետ, նրա դէմ զինվեցաւ խաւարը, մոլեռանդութիւնը և ինքնահաւան տգիտութիւնը զանազան Արարատեանների, Չերքէզեանների և Մանդինեանների առաջնորդութեամբ. Մի խումբ մարդկանց, որոնք կեղծաւոր կերպով իրանց ցոյց էին տալիս Նազարեանցի բարեկամներ, մատնեցին նրան կառավարութեանը և գրել տուեցին հայոց կաթողիկոսին մի պաշտօնական թուղթ մինիստրութեանը, որով կաթողիկոսը խնդրում էր կառավարութիւնից դադարեցնել ‹Հիւսիսափայլի› հրատարակութիւնը, որպէս վնասակար հրատարակութիւն ազգի և եկեղեցու գոյութեան համար.

Ահա Շահազիզեանի գրքի պատմական մասի կարճառօտ բովանդակութիւնը.

Կրքերը հանդստացան. Նազարեանց յետ քաշվեց գրական ասպարիզից. վերջապէս 1879 թւին նա վախճանվում է։

Չէ անցնում մի վեց ամիս և ‹փորձ› ամսագիրը իր աշխատակից Երիցեանի յօդուածով նորոգում է այն բոլոր զրպարտութիւնները և կեղտոտութիւնները արդէն մեռած Նազարեանցի դէմ, որ այդ նշանաւոր գործիչը կրեց իր կենդանութեան ժամանակ իր խաւար թշնամիներից.

Բայց Երիցեանը խորամանկութեամբ է բռնում գործը. Նա կամենում է ցոյց տալ որ հետևում է ոչ թէ այն առածին, որ ասում է ‹մեռածների մասին կամ ոչինչ, կամ լաւ›, բայց այն աւելի ժամանակակից առածին, որ ասում է ‹մեռածների մասին ճշմարտութիւն› Ահա ինչ է ասում նա.

Հազիւ թէ վեց ամիս կայ Նազարեանցի վախճանվելու օրից և դեռ չէ անցած ու շուտ չէ անցնելու այդ կորուստի ընդհանուրիս պատճառած ցաւը, դեռ հայոց եկեղեցիներում կատարվում է նրա հոգեհանգիստը ու վառ է նրա խունկ ու մոմը և ահա մենք փութահանում ենք ամենայն խստութեամբ և անաչառութեամբ քննութեան տակ ձգել հանգուցեալիս գրականական բոլոր գործունէութիւնը.

Շահազիզեանի գրքի մէջ բերած օրինակներից երկու երեքը բաւական է ցոյց տալ համոզվելու համար, որքան խիստ և անաչառ է Երիցեանը. Ահա ինչ է ասում Շահազիզեան.

Առաջին երկու երեք տողը, որ Նազարեանցի